Ավտոմեքենայի վարկ
Էլեկտրական ավտոմեքենայի վարկ

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար



Հրապարակման ամսաթիվ՝ օգոստոս, 2023

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ **www.hsbc.am**, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բովանդակություն

Ավտոմեքենայի վարկ 4
Էլեկտրական ավտոմեքենայի վարկ 5
Վարկի տոկոսադրույք 6
Մանրածախ հաշվարկային տոկոսադրույք (ՄՀՏ) 6
Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվություն 7
Տեղեկատվություն երաշխավորի համար 8
Վարկի մարման կարգը 8
Վարկի վաղաժամկետ մարում 9
Վարկավորման անհրաժեշտ պայմանները 9
Պահանջվող փաստաթղթեր 10
Ապահովում և ապահովագրություն 11
Վարկային հաշվի քաղվածքներ 11
Վարկի տրամադրում 11
Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ 12
Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ 12
Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ 13
Հավելված 1 14

Ավտոմեքենայի վարկ

Վարկի նպատակ	Ավտոմեքենայի ձեռքբերում
Վարկի գումար և արժույթ	3 – 40 մլն ՀՀ դրամ առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 3 – 20 մլն ՀՀ դրամ երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Վարկի ժամկետ	24 – 60 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	**Տարեկան անվանական տոկոսադրույքը լողացող է, որը գործում է պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Լողացող տարեկան անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝** **9% + 7% = 16%** **9% + 6% = 15% Plus և Status հաճախորդների համար**[1] Որտեղ՝ 9% – ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 7%, 6%-ը՝ հաստատուն մարժան:
Տարեկան փաստացի տոկոսադրույք	Սկսած 23.94%-ից Սկսած 23.29%-ից Plus և Status հաճախորդների համար
Վարկ / գրավ հարաբերակցություն	Ձեռքբերվող ավտոմեքենայի գնահատված և ձեռքբերման արժեքներից նվազագույնի մինչև՝ 70%-ի չափով առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 60%-ի չափով երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Նվազագույն կանխավճար	30%-ի չափով առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 40%-ի չափով երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 1%-ը (առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ) Վարկի գումարի 0.5 %-ը (առավելագույնը ՝ 100,000 ՀՀ դրամ) Plus և Status հաճախորդների համար
Վարկի սպասարկման վճար	**Չի կիրառվում**
Ավտոմեքենայի վաղեմության ժամկետ	Մինչև 120 ամիս

1 Plus և Status բանկային ծառայությունների փաթեթների մանրամասներին և պայմաններին կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի միջոցով՝ www.hsbc.am: Հաճախորդի՝ Plus կամ Status բանկային ծառայությունների փաթեթներից հրաժարվելու կամ նշված փաթեթների պայմաններից որևէ մեկին չբավարարելու դեպքում արտոնյալ տոկոսադրույքը կդադարի գործել:

Էլեկտրական ավտոմեքենայի վարկ

Վարկի նպատակ	Էլեկտրական ավտոմեքենայի ձեռքբերում
Վարկի գումար և արժույթ	3 – 40 մլն ՀՀ դրամ առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 3 – 20 մլն ՀՀ դրամ երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Վարկի ժամկետ	24-120 ամիս առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 24-84 ամիս երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Տարեկան անվանական տոկոսադրույք	**Տարեկան անվանական տոկոսադրույքը լողացող է, որը գործում է պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:** **Լողացող տարեկան անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է Բանկի ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝** **9 % + 5%= 14%** Որտեղ՝ 9% – ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 5%-ը ՝ հաստատուն մարժան:
Տարեկան փաստացի տոկոսադրույք	Սկսած 19.58%-ից
Վարկ / գրավ հարաբերակցություն	Ձեռքբերվող ավտոմեքենայի գնահատված և ձեռքբերման արժեքներից նվազագույնի մինչև՝ 90%-ի չափով առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 75%-ի չափով երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Նվազագույն կանխավճար	10%-ի չափով առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում 25%-ի չափով երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Վարկի տրամադրման և սպասարկման վճարներ	**Չեն կիրառվում**
Ավտոմեքենայի վաղեմության ժամկետ	Մինչև 120 ամիս առաջնային շուկայից ձեռքբերման դեպքում Մինչև 36 ամիս երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում
Cashback	Առաջին երեք օրացուցային տարիների ընթացքում Բանկը Հաճախորդին է վերադարձնում վարկի վճարված տոկոսների 5%-ը. վերադարձի առավելագույն գումարը կազմում է 100,000 ՀՀ դրամ[2]:

2 Cashback-ից օգտվելու համար իրավասու են բոլոր այն Հաճախորդները, որոնք գումարի վերադարձի օրը չունեն ժամկետանց պարտավորություններ: **Վճարված տոկոսների 5%-ի վերադարձը կկատարվի յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվարին:**

Վարկի տոկոսադրույք

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵ՛Ք ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ՝ Տոկոսագումարների և տոկոսադրույքների հաշվարկման կարգը:

Վարկի լողացող անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի վերանայման դեպքում:

Մանրածախ հաշվարկային տոկոսադրույք (ՄՀՏ)

- ՄՀՏ-ի հաշվարկման և հետագա փոփոխման հիմքում ընկած են Բանկի կողմից սահմանված հիմնական և երկրորդային ցուցանիշները:
- ՀՀ դրամով ՄՀՏ-ի հիմքում ընկած հիմնական ցուցանիշը համապատասխան երկու ամսվա կտրվածքով ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 181 օրից մինչ 1 տարի ժամկետայնությամբ ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքների պարզ միջին ցուցանիշն է:
- ՄՀՏ-ն, առաջին հերթին, սահմանվում է՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշը և սահմանման օրվա դրությամբ հավասար է հիմնական ցուցանիշի արժեքին:
- ՄՀՏ-ն ենթակա է վերանայման տարեկան երկու անգամ: ՄՀՏ-ն ենթակա է փոփոխման, երբ վերանայման օրվա դրությամբ գործող ՄՀՏ-ի և հաշվարկված ցուցանիշի տարբերությունը բացարձակ արժեքով կազմում է 0.5 տոկոսային կետ կամ ավել: Այս պարագայում ՄՀՏ-ը հավասարվում է ցուցանիշի նոր արժեքին: Հակառակ դեպքում այն մնում է անփոփոխ:
- Բանկի գործող մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի, դրա հիմքում ընկած ցուցանիշների, վերանայման պարբերականության, հաշվարկման, փոփոխման և կիրառման կարգի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք մեր ինտերնետային կայքի համապատասխան բաժին՝ Մանրածախ հաշվարկային տոկոսադրույք, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարե՛ք +374 60 655 000 հեռախոսահամարով:
- ՄՀՏ-ի փոփոխության/ճշգրտման դեպքում Բանկը պարտավորվում է հաճախորդին տեղեկացնել փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ՝ հաճախորդներին ուղարկելով անհատական ծանուցումներ:

Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվություն

- ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՄ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՇԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՐԱ ԿԿԻՐԱՌՎԻ ՏԱՐԵԿԱՆ 5% ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ Ի ՀԱՎԵԼՈՒՄՆ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ:
- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՖՈՐԹԻՆԳ ՓԲԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՈՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՎ ԿԱՐՈՂ Է ԱՅԼ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՈՍՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ: ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԿԻՐԱՌԵԼԻ Է ՆԱԵՎ ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ և ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
- ՎԱՐԿԱՌՈՒՆ/ԳՐԱՎԱՏՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԲԱՆԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
- ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎՃԱՐՈՒՄԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԲՈՆՈՒԳԱՆՁԵԼ ԵՎ ԻՐԱՑՆԵԼ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆԸ:
- ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՐՎԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒԻ/ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ՝ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

Տեղեկատվություն երաշխավորի համար

Երաշխավորություն տրամադրելիս երաշխավորը պետք է գիտակցի երաշխավորության տրամադրման հետևանքները, այդ թվում՝ պարտապանի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում պարտավորության, տույժերի ու տուգանքների ամբողջական կատարումը երաշխավորի կողմից, վարկառուի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատանալը, ընդհուպ մինչև երաշխավորի գույքից զրկվելը:

Վարկի մարման կարգը

Վարկի գծով հաշվեգրված տոկոսագումարների և մայր գումարի ամսական վճարումները կատարվում են ՀՀ դրամով: Վարկի գծով տոկոսագումարը հաշվարկվում է վարկի մայր գումարի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով՝ մեկ տարվա համար որպես հիմք ընդունելով 365 օր օրացուցային տարին կամ 366 օր օրացուցային տարին՝ նահանջ տարվա պարագայում:

Վարկը կարող է մարվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

Դիֆերենցված

Վարկի մայր գումարը մարվում է հավասար ամսական վճարումներով, իսկ ամսական տոկոսագումարները նվազում են ժամանակի ընթացքում՝ հիմնական գումարի նվազմանը զուգընթաց: Այսպիսով, վարկի մարման ողջ ժամանակահատվածում Ձեր ընդհանուր ամսական վճարումները նվազում են:

Հավասարաչափ

Վճարման ենթակա գումարները հաշվարկվում են հավասարաչափ ամսական վճարումների սկզբունքով: Այս դեպքում վարկի մարման ողջ ժամանակահատվածի ընթացքում վարկի գծով ամսական ընդհանուր վճարումների մեծությունը մնում է անփոփոխ, սակայն դրանում ներառվող վարկի մայր գումարի գծով վճարումների և ամսական տոկոսագումարների հարաբերակցությունը փոփոխվում է:

Եթե վարկատուի նկատմամբ ունեք չմարված պարտավորություն, ապա Ձեր կողմից պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ.

- Տուժանք
- Տոկոսագումարներ
- Մայր գումար

Վարկի վաղաժամկետ մարում

Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ վաղաժամկետ մարելու վարկի գումարը կամ դրա մի մասը առանց որևէ տույժի և տուգանքի՝ Բանկին համապատասխան հանձնարարական տալով: Վարկի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկի կողմից համամասնորեն նվազեցվում և հաճախորդին են վերադարձվում կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները, այդ թվում՝ վարկի տրամադրման միանվագ վճարը:

Վարկի հիմնական գումարի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկը կարող է Հաճախորդի ընտրությամբ՝

- վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցնել ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետն անփոփոխ

կամ

- նվազեցնել վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ

Վարկավորման անհրաժեշտ պայմանները

Վարկը տրամադրվում է, եթե հաճախորդը ՀՀ ռեզիդենտ[3] է, և բավարարված են հետևյալ պայմանները[4]՝

Աշխատավարձային հաճախորդներ

- Բանկում հաշվի առկայություն
- Առնվազն 3 ամիս աշխատանքային փորձ ներկայիս գործատուի մոտ
- Ամսական զուտ աշխատավարձը՝ նվազագույնը 200,000 ՀՀ դրամ

  Կամ

- ՀՀ այլ բանկում հաշվի առկայություն
- Առնվազն 3 ամիս աշխատանքային փորձ որևէ կազմակերպությունում
- Ամսական զուտ աշխատավարձը՝ նվազագույնը 250,000 ՀՀ դրամ

Ոչ աշխատավարձային հաճախորդներ

- Առնվազն 3 ամսվա պատշաճ բանկային պատմություն Բանկում
- Հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում են նվազագույնը 200,000 ՀՀ դրամ

  Կամ

- Առնվազն 3 ամսվա պատշաճ բանկային պատմություն ՀՀ այլ բանկում
- Հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում են նվազագույնը 250,000 ՀՀ դրամ

Անհրաժեշտության դեպքում՝ աշխատավարձը Բանկում սպասարկվող հաշվին փոխանցելու հետ կապված մանրամասներին կարող եք ծանոթանալ վարկի հաստատման գործընթացի ժամանակ:

3 ՀՀ ռեզիդենտ են համարվում այն անձինք, ովքոնք առնվազն մեկ տարի բնակվում են ՀՀ-ում՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

4 Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:

Պահանջվող փաստաթղթեր

- Վարկի դիմում
- Վաճառողի և գնորդի նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանշի վերաբերյալ այլ փաստաթղթի[5] բնօրինակներ*
- Եկամուտների առկայությունը հավաստող փաստաթղթեր (տեղեկանք աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ, բանկային հաշվի (հաշիվների) քաղվածք(ներ), առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Բանկի պաշտոնական կայքէջում՝ www.hsbc.am)*
- Ավտոմեքենայի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական
- Ավտոմեքենայի գնահատման հաշվետվություն[6]
- Տեղեկանք ՀՀ լիազոր մարմնի կողմից ավտոմեքենայի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ
- Ավտոմեքենայի հաշվառման վկայագրի պատճեն
- Ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր
- Էլեկտրական ավտոմեքենայի ձեռքբերման դեպքում գնման նպատակայնությունը հաստատող փաստաթուղթ
- Պաշտոնական ներկայացուցչությունից նոր ավտոմեքենա գնելու դեպքում պետք է ներկայացվի նաև առք ու վաճառքի պայմանագիրը՝ համապատասխան հաշիվ ապրանքագրի և մաքսազերծման փաստաթղթերի հետ միասին
- Ավտոմեքենայի ապահովագրության վկայական[7]
- Դիմում-հանձնարարական ոչ հաշվետեր Հաճախորդի և Բանկի միջև հաղորդակցման կարգի վերաբերյալ (համավարկառուների առկայության դեպքում)*

Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են առձեռն մեր մասնաճյուղերում կամ էլեկտրոնային ձևով Բանկի հետ համաձայնեցված ժամկետներում:

Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

5 Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ), ՀԾՀ չունենալու/ստանալու վերաբերյալ ՀՀ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանք:
6 Գնահատումը պետք է իրականացվի Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպության կողմից:
7 Ավտոմեքենան պետք է ապահովագրվի՝ օգտվելով Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ծառայություններից:

* Վերը նշված փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել նաև համավարկառուների և երաշխավորների համար (առկայության դեպքում):

Ապահովում և ապահովագրություն

- Ավտոմեքենան գրավադրվում է Բանկի օգտին մինչև վարկի ամբողջական մարումը:
- Գրավադրված ավտոմեքենան պետք է ապահովագրվի՝ օգտվելով Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ծառայություններից: Ապահովագրական պոլիսը պետք է վերակնքվի յուրաքանչյուր տարի վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում: **Եթե վարկառուն չի ապահովում գույքի ապահովագրումը, ապա Բանկն ինքնուրույն կիրականացնի ապահովագրությունը՝ վարկառուի հաշվին:** Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացված է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հետևյալ հղումով Ապահովագրական ընկերություններ – HSBC AM:
- Ապահովագրական հատուցման շահառուն վարկառուն է:
- Ապահովագրական գումարը պետք է հավասար լինի ավտոմեքենայի շուկայական արժեքին:
- **Գրավի պայմանագրով նախատեսված գրավի առարկայի ապահովագրության պայմանները խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել վարկի վաղաժամկետ մարում:**

Վարկային հաշվի քաղվածքներ

Վարկային հաշվի վերաբերյալ Բանկը տրամադրում է ամսական քաղվածքներ՝ համաձայն Բանկի և հաճախորդի միջև կնքված հաղորդակցման կարգի: **Վարկերի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրման համար վճար չի կիրառվում:**

Վարկի տրամադրում

- Վարկը տրամադրվում է անկանխիկ և փոխանցվում է հաճախորդի բանկային հաշվին՝ վարկային պայմանագիրը ստորագրելուց և վարկային պայմանագրով սահմանված վճարումները կատարելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում::
- Վարկը տրամադրվում է բացառապես անձնական օգտագործման ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:
- **Մոտոցիկլետները չեն վարկավորվում:**
- Ավտոմեքենայի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը կրում է հաճախորդը: Մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Հավելված 1-ում:
- Վարկի դիմումն ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում կամ հեռահար եղանակով՝ Բանկի պաշտոնական կայքէջի միջոցով:
- Բանկը վարկ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ Հաճախորդի վարկարժանությունը, ժամկետանց պարտավորությունների առկայությունը և այլն:
- Բանկը վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում և որոշման մասին Հաճախորդին տեղեկացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի նախընտրած եղանակով:

ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԲԱՆԿԸ ՁԵՌ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ: ՎԵՐՋԻՆՍ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՀԱՃԱԽՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԵԹԵ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԺԱՄԿԵՏ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ:

Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ

- Փաստաթղթավորված կայուն եկամուտ, որը համապատասխանում է տվյալ վարկատեսակի տրամադրման նվազագույն պահանջներին
- Դրական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը չպետք է գերազանցի Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն չեմը
- Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթեր

Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ

- Վարկը մարելու համար անբավարար կամ չփաստաթղթավորված եկամուտներ
- Վարկի ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն
- Հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում
- Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթերի բացակայություն
- Բացասական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը գերազանցում է Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն չեմը
- Հաճախորդի տարիքը չի համապատասխանում տվյալ վարկատեսակի տրամադրման համար Բանկի կողմից սահմանված չափանիշին

Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ[8]

Ի՞նչ է վարկային պատմությունը և ի՞նչպես է ձևավորվում

Վարկային պատմությունն անձի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս, թե Հաճախորդն ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները: Այն ձևավորվում է ԱՔՌԱ վարկային բյուրոյի անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա: Վարկային պատմությունը, որպես կանոն, օգտագործվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում:

Ի՞նչ տեսակի և ի՞նչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում վարկային պատմությունը

Վարկային պատմությունը պարունակում է անձի ֆինանսական պարտավորությունների և դրանց կատարման վերաբերյալ հարցման պահին նախորդող 5 տարվա ընթացքում հավաքագրված տեղեկությունները, ինչպիսիք են օրինակ՝

- ստացած վարկերը, դրանց քանակը և գումարը, յուրաքանչյուր վարկի տեսակը և ժամկետը,
- վարկային պարտավորությունների կատարումը (օրինակ՝ արդյո՞ք ժամանակին եք կատարել տոկոսների ու մայր գումարի մարումները, թե՝ ոչ),
- տրամադրված երաշխավորությունները,
- ժամկետանց վարկերի առկայությունը, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժերն ու տուգանքները:

Անհրաժեշտ գործողություններ՝ սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար

Վարկային պատմության մեջ սխալ կամ թերի տվյալների առկայության դեպքում վարկառուն կարող է դիմել ԱՔՌԱ վարկային բյուրոյին պարզաբանման և վարկային պատմությունում ներառված տեղեկատվության ուղղման նպատակով:

Անհրաժեշտ գործողություններ՝ վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար

Վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար անհրաժեշտ է.

- պատշաճ կերպով և ճիշտ ժամանակին կատարել վարկային պարտավորությունները,
- բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման ուշացումները,
- ամբողջությամբ մարել նախկինում առաջացած ժամկետանց վարկային պարտավորությունները,
- խուսափել խնդրահարույց վարկային պատմություն ունեցող անձանց համար երաշխավոր դառնալուց:

8 Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել հետևյալ հղումներով՝ abcfinance.am և acra.am:

Հավելված 1

Ավտոմեքենայի գնահատման, գրավադրման և ապահովագրության հետ կապված ծախսեր

Վճարի տեսակը	Վճարի չափը
Ավտոմեքենայի գնահատման վճար	7,000 – 8,000 ՀՀ դրամ
Գրավի իրավունքի պետական գրանցման պետական տուրք և վճար	2,200 ՀՀ դրամ
Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վճար	23,900 ՀՀ դրամ
ՃՈ կողմից տրամադրվող տեղեկանք գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ	3,300 ՀՀ դրամ
Ապահովագրական ծածկույթի տարեկան դրույքաչափ	2.5% ռիսկերի փաթեթի համար[9]
Նոտարական ծառայության վճար (ներառյալ նոտարական վավերացման պետական տուրքը)	
Միայն գրավի պայմանագրի դեպքում	13,000 ՀՀ դրամ
Գրավի և առուվաճառքի պայմանագրի դեպքում	20,000 ՀՀ դրամ

9 Նշված սակագները կիրառելի են այն ապահովագրական պայմանագրերի համար, որոնք կնքվել են Բանկի միջոցով, որը հանդիսանում է ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի ապահովագրական գործակալ: Գույքի ապահովագրությունը Բանկի միջոցով ձևակերպելը պարտադիր չէ: Դուք կարող եք ապահովագրական պայմանագիր կնքել Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերություններից որևէ մեկում:

Հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այլ ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող նմանատիպ ծառայությունները համեմատելու համար կարող եք այցելել նաև «Ձեր ֆինանսական տեղեկատուն» կայքէջը հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2023:
Բոլոր իրավունքները պահպանված են: